ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 180-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Լևոն Բարսեղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. 2022 թվականի հոկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Լևոն Բարսեղյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, այնքանով որքանով սահմանափակում է անձի արդար դատաքննության, դատարանի ու արդարադատության հասանելիության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները, ճանաչել Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/23801/02/18 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ իր համար «(…) բացասական հետևանք է առաջացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթը (…)»:

Դիմողը, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, փաստում է, որ «(…) սույն դիմումի փաստական հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործով դիմողի կողմից դատարան ներկայացված հայցը թողնվել է առանց քննության՝ այն հիմքով, որ հայցվորը կամ վերջինիս ներկայացուցիչը չեն ներկայացել միմյանց հաջորդող երկու դատական նիստերի և չեն միջնորդել հետաձգել դատական նիստը կամ չեն խնդրել նիստն անցկացնել իրենց բացակայությամբ»:

Դիմողն ընդգծում է, որ «թեև ներպետական բարձրագույն ատյանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվել է անձի խախտված իրավունքը, և դատական գործը վերսկսվել է, սակայն ա/ վճռաբեկ բողոքը բավարարվել է այլ հիմքով և դատարանի կողմից չի տրվել քննարկվող հոդվածի կիրառելիության մասով մեկնաբանություն Դիմողի նշած հիմնավորումների շրջանակում, ինչը Դիմողը կարևորում է՝ հաշվի առնելով քննարկվող հոդվածի կիրառման պրակտիկան, բ/ ինքնին նշված հոդվածի մեխանիկական կիրառումը ստորադաս ատյանների կողմից խոչընդոտներ է ստեղծել գործի քննության համար, ինչը տեղիք է տվել բողոքարկումների և ազդել, ի թիվս այլնի, գործի արդյունավետ քննության, գործի՝ ողջամիտ ժամկետներում քննության սկզբունքների վրա, ինչով պայմանավորված Դիմողը ներկայացնում է սույն դիմումը՝ իր նկատմամբ ներպետական դատարանների կողմից կիրառված իրավական նորմի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի սահմանադրա-

կանության, դրա՝ անձի արդար դատաքննության իրավունքին միջամտելու հարցի քննարկման և այդ առնչությամբ մեկնաբանություններ ստանալու նպատակով»:

Ըստ Դիմողի՝ «(…) թիվ ԵԴ/23801/02/18 քաղաքացիական գործով հայցն առանց քննության թողնելու մասին որոշմամբ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ բողոքը մերժելու մասին որոշումներով խախտվել են Լևոն Բարսեղյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ դատարանի հասանելիության իրավունքը, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից գործը քննելու իրավունքը»:

Դիմողը նշում է, որ ինքը «(…) Առաջին ատյանի դատարանում նշանակված դատական նիստերին առնվազն ցույց է տվել իր շահագրգռվածությունը և հետաքրքրվածությունը գործի քննության մեջ նիստերից առաջ դիրքորոշում ներկայացնելու միջոցով, և հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքն առկա չէ»:

Դիմողն ընդգծում է, որ «(…) կարևոր է, որ յուրաքանչյուր անգամ քաղաքացիական գործով վարույթն առանց քննության թողնելիս Դատավորը քննարկի՝ արդյոք իրապես կողմը գործով չի ցուցաբերում հետաքրքրվածություն և շահագրգռվածություն, ինչով է դա արտահայտվել: Սակայն դրա հնարավորությունը Դատարանները պրակտիկայում չունեն՝ հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմպերատիվ բնույթը (…)»:

Վկայակոչելով մի շարք դատական գործերով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին տրված մեկնաբանությունները՝ Դիմողը փաստում է, որ նշված դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթը մեկնաբանել են տարակերպ և, ըստ այդմ՝ կայացրել են

միմյանց հակասող դատական ակտեր: Դիմողը նշում է, որ այս առումով առկա է օրենքի միատեսակ կիրառման և մեկնաբանման անհրաժեշտություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը վկայակոչելով՝ Դիմողն ընդգծում է, որ «(…) հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը չի բացառում հետագայում հայցվորի կողմից կրկին նույն առարկայի մասին նույն փաստական հիմքերով նույն անձանց դեմ հայցադիմում ներկայացնել: Հետևաբար՝ այն բոլոր դեպքերում, երբ հայցվորի բոլոր գործողությունները ցույց են տալիս, որ վերջինս շահագրգռված է գործի ելքով, սակայն չի ներկայանում հերթական երկու նիստերին և այդ հիմքով դատարանը հայցը թողնում է առանց քննության, ապա հայցվորը միևնույն է հնարավորություն է ունենալու նույն հարցը կրկին ներկայացնելու, ինչը լրացուցիչ ծանրաբեռնում է դատարանի գործունեությունը (…)»:

Ամփոփելով դիմումով նշվածը՝ դիմողը եզրահանգում է, որ «(…) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը այնքանով, որքանով սահմանափակում են անձի՝ դատարանին և արդարադատությանը հասանելիության իրավունքը, դատարանի մատչելիության և դատական պաշտպանության միջոցները և եղանակները ազատորեն ընտրելու և տնօրինելու իրավունքները, արդյունքում անձը զրկվել է արդարադատությունից, հակասում են ՀՀ Սահմանադրության 31-րդ, 34-րդ, 42-րդ և 51-րդ հոդվածներին»: Դիմողը նշում է, որ Սահմանադրական դատարանից հայցում է «(…) սույն դիմումով առաջադրված թեզերի հաստատում, որի արդյունքում լուծում կստանա Դիմողի և ՀՀ այլ քաղաքացիների համար բարձր կարևորություն ունեցող իրավական խնդիր»:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով՝

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով,* ***երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,*** *և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ/ երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ/ երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի*

քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված ***այլ դեպքերում:***

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ ***«(...) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ փվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:*

Սույն դիմումի, ինչպես նաև դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/23801/02/18 քաղաքացիական գործով 2022 թվականի ապրիլի 15-ին կայացրած որոշմամբ բավարարել է Լևոն Բարսեղյանի վճռաբեկ բողոքը, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Այսինքն՝ *Վճռաբեկ դատարանը, բավարարելով Դիմողի վճռաբեկ բողոքը, կայացրել է Դիմողի համար բարենպաստ իրավական հետևանքներ առաջացնող*

դատական ակտ և, ըստ էության, վերականգնել է վերջինիս ենթադրյալ խախտված իրավունքները: Ավելին, սույն գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության և ներկայում դեռևս քննվում է դատական կարգով, հետևաբար՝ Դիմողը սույն գործով չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Այս առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ վերոնշյալ հանգամանքն արձանագրվել է հենց Դիմողի կողմից: Մասնավորապես՝ դիմումում նշված է, որ «թեև ներպետական բարձրագույն ատյանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվել է անձի խախտված իրավունքը, և դատական գործը վերսկսվել է, սակայն (…)»:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն **անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով:**

3.2. *Չնայած այն հանգամանքին, որ վերոշարադրյալն ինքնին բավարար հիմք է սույն գործի քննությունը մերժելու համար, Սահմանադրական դատարանը կարևորում է նաև* ***Դիմողի կողմից անհատական դիմումով բարձրացված հարցի բնույթին անդրադառնալը:***

Քննարկվող համատեքստում հարկ է ընդգծել, որ Սահմանադրական դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման շրջանակներում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ***կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:***

Նկատի ունենալով վերոշարադրյալը, այդ թվում՝ սույն գործով դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառված չլինելու հանգամանքը, ինչպես նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված դիրքորոշումները՝ Սահմանադրական

դատարանն արձանագրում է, որ ***Դիմողն, ըստ էության, բարձրացրել է ոչ թե կոնկրետ, այլ վերացական վերահսկողության շրջանակներում գնահատման ենթակա հարց, մինչդեռ վերջինս իրավասու չէ նման հարցով դիմելու Սահմանադրական դատարան:***

Մասնավորապես՝ Դիմողը դիմումում փաստել է, որ «թեև ներպետական բարձրագույն ատյանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվել է անձի խախտված իրավունքը, և դատական գործը վերսկսվել է, սակայն ա/ վճռաբեկ բողոքը բավարարվել է այլ հիմքով և դատարանի կողմից չի տրվել քննարկվող հոդվածի կիրառելիության մասով մեկնաբանություն Դիմողի նշած հիմնավորումների շրջանակում, ինչը Դիմողը կարևորում է՝ հաշվի առնելով քննարկվող հոդվածի կիրառման պրակտիկան (…)»:

Միևնույն ժամանակ, Դիմողն ընդգծել է, որ ***«(…) կարևոր է, որ յուրաքանչյուր անգամ քաղաքացիական գործով վարույթն առանց քննության թողնելիս Դատավորը քննարկի՝ արդյոք իրապես կողմը գործով չի ցուցաբերում հետաքրքրվածություն և շահագրգռվածություն, ինչով է դա արտահայտվել: Սակայն դրա հնարավորությունը Դատարանները պրակտիկայում չունեն՝ հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմպերատիվ բնույթը (…)»***:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը կրկին հանգում է այն եզրակացության, որ սույն **անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի,

ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Լևոն Բարսեղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴԱՈ-196